Ազգի ձգնաժամի ժամանակ, երէ կամօ-լիկ հոգևորականութիւնը չը գործէ, չը խօսի, չաշխատի,—այդ մեռելային լռութիւնը կա-րող է շատ վատ հետևանքներ ունենալ։ Երէ Անդրկովկասի հայ—կաթոլիկ հոգևորակա-նութիւնը չը կատարէ իւր պարտքը, նա չէ կարող զանազանվել այն վատ առաջնորդներից, որոնք արդէն գաղված են ազգասիրց գա-ւանաններուն կարգին, թէ՛ղ աշխատի կաթոլիկ հոգևորականութիւնը, երբ ժամանակը պահան-ջում է ոչ թէ խօսք, այլ գործ, իսկ բարի գործը, բարի օրինակը, եռանդուն աշխատանքը կարող է հազարաւոր սրտեր կախվածել և հազարաւոր մարդի ազատել սոված-ութիւնից։

Հայ-կաթոլիկ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒԻՑ

—

19 յունիսի

Ահա ամբողջ տարին լրանում է՝ որ Շուշու դրա-րոցների մասին ոչինչ չը խօսեցինք պարբերական հրատարակութեանց մէջ, բայց այժմ երբ լրացաւ ուսումնական տարին և ուսումնարանների էլ հրա-պարակաւ ցոյց տուին իրենց ամբողջ տարեվայ գործունէութիւնը, կարծես ուշադրի չէր լինի նոցա մասին մի քանի տեղեկութիւններ հաղորդել։

Հոգևոր երկսեռ դպրոցների քննութիւնները ըս-կսվեցան անցեալ մայիսի 19-ին և բաւականին յաջող վերջացան ամսիս 15-ին։ Զը ցանկանալով երկար ու բարակ խօսել այս ուսումնարանների վարչութեան բարոյական և նիւթական գործունէու-թեան վրա՝ այստեղ կը բերեմ մի թիւեին հաշիւ, ո՞րից ընթերցողը իմքը պարզ կը նկատէ նրա մեծ յառաջադիմութիւնը։ Շուշու հոգևոր դպրոցը սկը-սված իր հիմնարկութեան օրից մինչև 1878 թիւը ունքան աչակերտներ չէ ունեցել, որքան այս եր-կու վերջին տարին ունէր. աչակերտների թիւը եր-եէք 200-ից չէ բարձրացել, բայց այժմ նա ունի 500-ից աւելի։ Շուշու հոգևոր դպրոցը երբէք չէ ունեցել չորրորդ դասատուն, որ համապատասխա-նէր իր կուրսին, իսկ միայն նրա լոկ անունն է եղել, կամ էլ նոյն չատ անգամ նա էլ չէ եղել, բայց այժմ նա ունի չորրորդ դասատուն համապատաս-խանող պրոգրամմայի ու այս տարի էլ կունենայ հինգերորդը։ Շուշու դպրոցը երբէք չէ ունեցել, բացի պ. Շանչեանի ժամանակից, այնպիսի կազ-մակերպված ուսուցչական խումբ, որ այժմ ու-նի։ (Ուսուցիչները քաղաքիս բոլոր դասակարգի մէջ մեծ յարգանք և պատիւ են վայելում, որ անսպասելի էր չուշեցոց կողմից)։ Մեր հոգևոր դպրոցը ոչ մի ժամանակ չէ ունեցել այնպիսի մի հոգաբարձութիւն, որը այժմ ունի։ Ճշմարիտ է երբեմն պատահում էին նոցա մէջ անհամաձայնու-թիւններ, բայց դրանք չուտով անհետանում էին։ Հոգաբարձութեան ներքին գործունէութեան վրա մանրամասն խօսել թողնում եմ ուրիշ անգամ։ Բա-ւական է այժմ միայն այսքանը ասել՝ որ հոգաբար-ձութիւնը հաւաքել է 17,000-ի Այսպիսի մի ֆինան-սական անսպասելի յաջողութեան համար պարտական ենք ևերջակ լինել հոգաբարձու-թեան անդամ մեծ. պ. Բաբա Բէգլարեանից, որը ամէ ու ձախ իր վրա խոստացութիւն ուշադրութեան չը դարձնելով, հրապարեաս ցոյց տուաւ իր ան-ձնազոհութիւնը։ Կեռ պէտք է ասած՝ որ ուսում-նարանների անդամ կալուածքներից, որի տարա-ձութիւնը հասնում է 200,000 դեսեատինի, և որի մասին հաւատացած եմ, որ ոչ լրացրութիւնը և ոչ էլ ապագութիւնը տեղեկութիւն ունի՝ մինչև հի-մայ դեռ բացի մեծ ժամանգութիւնն վրա, որի նը-մանը ոչ Ս. Էջմիածինը, ոչ Ներսիսեան դպրոցը և ոչ նոյն իսկ Մարտիկան վարժարանը ունի, գուցէ կը խօսենք մի ուրիշ յարմար ժամանակ և ուրիշ տեղ։

Բայց պէտք է ասած՝ որ քննութիւններին այս տարի հաւաքութիւնը այնքան չէր յաճախում, ինչպես անցեալ տարի, իսկ վերջին քննութիւնները ձեռագործութիւն, նկարագրութիւն և երգեցո-ղութիւն էր, այդ օրը հանդիսականներով լիքն էր օրիորդական ուսումնարանի բոլոր սենեակները։ Այս օրը, կարծես, քաղաքիս համար մի մեծ տօն լի-նէր, ոչ միայն հայերը այլ և օտարներն էլ մասնա-կից կին այս հանդէսին։ Նկարագրութիւնները և ձե-ռագործները բաւական գեղեցիկ էին, ժողովրդը համարեա հիացաւ այս առարկաներով։ Ձեռագոր-ծների մէջ այնպիսի առարկաներ կային, որոնց համար մեծ ծախք, ժամանակ և աշխատութիւն էր վատնված, բայց նրանք իսկապես չ՝արժանեին առաջարկներ էին և ոչ կեանքի պիտոյքներ. Մեր ժողովուրդը առանց նրանց ևս բաւական վար-ժված է չ՝ապրելիութիւնների մէջ, բայց դպրոցը պէտք է աշխատէ ոչնչացնել այդ սխալը և ոչ թէ զարգացնել նրան։ Շնորհակալութիւն պ. պ. հոգաբարձուներին, ուսուցիչներին, աչակերտներին և աչակերտուհիներին, որոնց ամեն մէկի պարտքը չ՝ատելութեամբ կատարած տեսանք։ Այս համարձակ-վում եմ ասելու, որ մեր երկսեռ հոգևոր դպրոցը այժմ աւելի բարձր է կանգնած, քան մեր մյուս բաւականի դպրոցները։ Թէև այս տարի չորրորդ դասատուն աչակերտներից մի քանիսը պէտք է թևմի գիւղական դպրոցների ուսուցչութեան պաշտօն ստանային, բայց յետաձգվեցաւ չէ-տենաց տարին այս աչակերտները և չորրորդ դա-սատուն աչակերտուհիները պ. Մանդինեանից մաս-կավարժական դասեր կը լսեն և նրա նորկա-յութեամբ մեր դպրոցներում փորձական դա-սեր կը կարդան ու աւագխմբ տարուանից կը ընդունեն գիւղական վարժապետի պաշտօն։ Այս-պէս այս տարի կունենանք տղայոց հինգերորդ դասատուն, իսկ օրիորդաց չորրորդ, բայց աւա-չխմբ տարվայ համար չատից քչչից փորձված և օրինաւոր գիւղական վարժապետներ։ Ցոյս ու-նինք որ պ. Մանդինեանը չը պէտք է խնայէ իր ճիգը թափելու ամենայն անձնուիրութեամբ կա-տարել իր վրա ընդունած պարտականութիւնը։

Իսկ քաղաքային օրիորդաց դպրոցի մասին այս անգամ երկար չը պէտք է խօսեմ. այդքանը միայն կասեմ, որ աւելի վատթար և անհամեմատելի զը-րութեան մէջ է, քան անցեալ տարին։ Օրիցդր այս ուսումնարանը յետ է գնում և, կարծես, քայ-քայվելու վրա լինի։ Օրիորդների թիւը նոյնպէս նուազած է։ Ցանկալի էր այս դպրոցը նոյնպէս ծաղկեալ դրութեան մէջ տեսնել։

Արցախեցի

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳԻՒՆ

—

Թիֆլիս, 6 յունիսի

«Մշակուս լրագիրը չատ սխալվում է կարծելով թէ ես «Մշակի» 98-ղ համարում գրելով, իբրև եմ ուզեցել պատասխանել. ես խոստովանում եմ որ «Փեղուխ գնդերիցը» ես չունեմ, ես չեմ կարող այն ոճերը գործածել, որ նա է գործածում. Միայն նորա զրպարտութեանց դէմ ես եմ ասում, թէ կեանքիս մէջ մէկ մարդու թէ չատ, թէ քիչ փող երբէք տուած չեմ, որ աւետարանական դառնայ, թէև չատերը այդ բանը կարծելով ինձ մեծ նեկուց են ու զատարկ գնացել և մինչև մեռս էլ ոչնչի այդ նպատակով փող չեմ տայ, համոզված լինելով, որ չատերանց չէ կարելի փողով կրօն կամ հա-մոզում փոխել տալ։ Ոչ ոք չէ կարող ինձ վրա մի այդպիսի բան ապացուցանել թէ ես երբէք ա-պրած լինեմ, բայց թէ ազգասիրութեան տալիս ենք մենք աւետարանականներս իբրև զուտ ազգա-մոլութեան մեզ դիմող ազգասերների առանց կը-րոնքի և ազգանքների տարբերութեան—ի՞նչ կարէ մեր կարողութեան չափով մեր անձնական աչ-խատանքից—դա մի ընդհանուր մարդկային պար-տականութիւն է, որի համար ոչ ոք ոչի չի մեղադրիր։

Ձրպարտութիւն է այն խօսքն էլ որ իբրև թէ ես, Ամիրխանեանցս ինչ եկեղեցին կապատ-կան եմ կոչել կամ կոչում լինիմ։ Դա ոչ ոք չէ կարող փաստով ապացուցանել, որովհետև այդ-պիսի միաք չը կայ ինձանում։ Երէ այդպէս լինէր, մենք աւետարանականներս լուսաւորչական եկե-ղեցին թողնելիս կը մկրտվէինք, որովհետև մենք մկրտութիւնը անհրաժեշտ համն ենք համարում քրիստոնէութեան. բայց ուրիշ եկեղեցիների պէս լուսաւորչական հային, ուսեցուն կամ յոյին (լուսաւորչական յոյներ էլ կան, որոնք դասանու-թիւնով լուսաւորչական են, բայց ազգաս. ճոյն) մենք մեր եկեղեցին ընդունելիս կրկին անգամ չենք մկրտում. Նորա մկրտութիւնը բոլորովին վաւերական և քրիստոնէական ենք համարում. Նոյն իսկ Գրեգոր Լուսաւորիչը որ Տանկաա-տանում մանկտական կրօնք էր ընդունել, թէպետ տուել, թէպէտ կնոջ հետ ամուսնացել, և երկու զաւակներ էլ ստացել՝ Մուսթաֆա և Փէմպէ, երբոր Ն. Պօլսում իմ աչխատանքը դար-ձնել վերադարձաւ քրիստոնէութեան մէջ իր 'ի ծնէ թիւրք կնոջումն ու զաւակներովը, մենք Հայր Մելքոնին կրկին անգամ չը մկրտեցինք, այլ նրանից երկրորդ անգամ մկրտեցինք միայն իսկ կնոջն ու զաւակներին կրկին մկրտում են. Ձչմարիտ է՝ թիֆլիսում կան աւետներ, որոնք ապրում և լիգուով աւտ են, և բարեխտ եկե-ղեցի են կազմել, և մեր աէրութեան օրէնքներին էլ նորանց ճանաչել են իբրև քրիստոնէական եկե-ղեցի. ահա նրանք մկրտում են, և այն էլ ոչ մէկ տիւերով կամ մի ծածուկ անկիւնում, այլ լոյս օրը բոլոր աչխարհի աչքի առաջին կուր գե-տուզը. Նրանք ուրիշ ոչ մի եկեղեցու մկրտու-թիւնը չեն ընդունում, և ճշմարիտ քրիստոնեայ համարում են միայն—ինչպէս ես կարծում եմ—իրանց մկրտածներին. Ե՞ նրանք մկրտում են միայն չափահասներին. Մենք նոյ աւետարանականներս այդ բաւական (որ նշանակում է մկրտեալներ) համարում ենք